ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 38

10 հունիսի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի ԹԻՎ 18-Ն, ԹԻՎ 20 ԵՎ ԹԻՎ 21 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 3-րդ մասի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2020 թվականի մայիսի 26-ի N 01/05572-2020 գրությունը.

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է</u>

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 1-ի թիվ 18-Ն, թիվ 20 և թիվ 21 որոշումների մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 1-ի << ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ>> թիվ 18-Ն որոշման հավելված N 1-ի վերնագրում «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ» բառերը փոխարինել «ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ» բառերով: Հավելված N 1-ի աղյուսակում «1. Հարկային եկամուտներ» տողի «Հաշվարկային /տարեկան/» սյունակում նշված «149231.1» թիվը փոխարինել «149231.3» թվով: «9. Այլ եկամուտներ» տողի «Փաստացի» սյունակում նշված «60.0» թիվը անհրաժեշտ է ներառել սեփական եկումտներում և «5. Ընդամենը սեփական եկումուտներ» տողի «Հաշվարկային /եռամսյակ/», «Փաստացի» և «%» սյունակներում նշված «10184.1», «33594.3» և «83.6» թվերը համապատասխանաբար փոխարինել «40184.1», «33654.4» և «83.8» թվերով:

Թիվ 18-Ն որոշման հավելված N 2-ում «1. Օրենսդիր և գործադիր մարմինների պետ. կառավարում» տողի «Պլան 1-ին եռամսյակ» և «%» սյունակներում նշված «53991.1» և «75.1» թվերը համապատասխանաբար փոխարինել «54191.1» և «74.8» թվերով:

«9. Կրթություն» տողի «Պլան 1-ին եռամսյակ» և «%» սյունակներում նշված «41567.0» և «68.1» թվերը համապատասխանաբար փոխարինել «42435.0» և «68.4» թվերով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 1-ի << ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 86-Ա ՈՐՈՇՄԱՆ 6-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> թիվ 20 որոշման հավելվածում «Ընդամենը» տողի «Պաշտոնային դրույքաչափը լրացնել 2 311 180 /դրամ/», «Սահմանված դրույքը՝ 19,23» և «Սահմանված դրույքաչափը՝ 2 035 408 /դրամ/» թվերով :

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 1-ի << ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի ԹԻՎ 86-Ա ՈՐՈՇՄԱՆ 7-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> թիվ 21 որոշման հավելվածում «Ընդամենը» տողի «Պաշտոնային դրույքաչափը լրացնել 1 897 159 /դրամ/», «Սահմանված դրույքը՝ 15,98» և «Սահմանված դրույքաչափը՝ 1 699 541/դրամ/» թվերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ -	Դեմ՝ - 0	Ձեռնպահ՝ - 0
ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՆԱԻՐԻ			
ԱՐՍԵՆՅԱՆ ԱՐՍԵՆ			
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ			
ՀՈՎՍԵՓՅԱՆ ԿԱՄՍԱՐ			
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՌԼԵՆ			
ՂԶՐՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ			
ՄԵԼԻՔՅԱՆ ԲԱԲԻԿ			
ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ			
ՆԻԿՈՅԱՆ ԱՐՄԵՆ			
ՇԱԲՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ			
ՈՒՌՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ			
ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ			
ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱԳՈՒՆ			
ՍԱՐԳՍՅԱՆ ԶԱՎԵՆ			
ՎԱՐՈՍՅԱՆ ԱՐՍԵՆ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020 թվականի հունիսի 10
Քաղաք Մարալիկ